# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

16 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 061-Ա

### ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՄՇՏԱԿԱՆ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 28.09.2006թ-ի «Շրջակա միջավայրի դիտարկումների պետական ցանցի օբյեկտների հիմնման, պահպանության, դրանց շուրջ պահպանման գոտիների ստեղծման կարգը և սահմանափակումների ցանկը հաստատելու մասին» N 1491-Ն որոշմամբ, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է***.

1. Տալ համաձայնություն ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի /այսուհետ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ/ Ալարեքս-Դեբեդ հիդրոլոգիական դիտակետի գործունեության համար հողատարածք հատկացնելուն՝ համաձայն 28.09.2006թ-ի «Շրջակա միջավայրի դիտարկումների պետական ցանցի օբյեկտների հիմնման, պահպանության, դրանց շուրջ պահպանման գոտիների ստեղծման կարգը և սահմանափակումներրի ցանկը հաստատելու մասին» N 1491-Ն որոշմամբ սահմանված կարգի:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Դեբետ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-034-0037-0008 կադաստրային ծածկագրով 0,082872 հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ գործառնական նշանակության հողամասը՝ անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ին՝ անժամկետ հիդրոլոգիական դիտարկումներ կատարելու նպատակով:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ